ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

27-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2026 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ՝ 8-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԹԻՎ 1-ԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 10 (տասն) անդամներ:

Բացակա էին՝ Ա. Ալեքսանյանը, Ա. Թադևոսյանը, Մ. Ամբարցումը, Ա. Ամբարցումը, Հ. Դավթյանները

Համայնքի ղեկավարի Լիա Սեդրակյան **հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝** Սերգեն Ալեքսանյանը, Մորգ Օհանյանը, Ա. Գրիգորյանը:

Մասնակցում էին նաև ՀՀ դատական դաշտի զարգացման հիմնադրամի Ա. Մանուկյանը և գրասենյակի Մ. Մելքումյանը:

Նիստը վարում էր Ցանցեր համայնքի ղեկավարի տեղակալ Հեղինե Ցարուքյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Աննա Դանիելյանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ՝ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել 27-ը փետրվարի 2026թ. ութերորդ նստաշրջանի հերթական առաջին նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

Զեկ. Ա. Դանիելյան

2)Եղեգիս համայնքի ղեկավարի հաղորդումները 2025թ. չորրորդ եռամսյակի բյուջեի կատարման ընթացքի մասին,

Զեկ. Մ. Օհանյան

3)Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2025 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, և 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին,

Զեկ. Ս. Խորենյան

4)Համայնքային նշանակության փողոցի անվանակոչման մասին,

Զեկ. Ա. Դանիելյան

5)Եղեգիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալի 26/01/2026թ. թիվ 13Ա կարգադրությունն ի գիտություն ընդունելու մասին,

Զեկ. Ա. Դանիելյան

6)Եղեգիս համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի երկրորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին,

Զեկ. Ա. Դանիելյան

7)Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը երեք տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին,

Զեկ. Ա. Գաբրիելյան

8)Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով տնտեսական զարգացման ծրագրային հայտեր հաստատելու մասին,

Զեկ. Ա. Դանիելյան

9)Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող բնակավայրերի նշանակության հողատեսքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին,

Զեկ. Ա. Գաբրիելյան

10) Եղեգիս համայնքի ավագանու 29/11/2024 թվականի թիվ122Ա որոշման բովանդակությունը նոր խմբագրությամբ շարադրելու մասին,

Զեկ. Ա. Գաբրիելյան

11)Ահարոն Յուրիկի Գաբրիելյանի և Նաիրուհի Սամվելի Ղազարյանի սեփական գյուղատնտեսական նշանակության հողատեսքի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

Զեկ. Ա. Գաբրիելյան

12)Ավագանու 21/12/2025թ. «2026 թվականի համար Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 121Ա որոշման հավելվածը նոր խմբագրությամբ շարադրելու մասին,

Զեկ. Ա. Դանիելյան

13)Սալլի գյուղի «Շոր ջուր» կոչվող տարածքում գտնվող, չշահագործվող 150 մետր երկարությամբ երկաթյա խողովակի օգտագործման մասին,

Զեկ. Ա. Գաբրիելյան

14)Եղեգիս համայնքի ավագանու մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին,

Զեկ. Ա. Գաբրիելյան

15)Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.46379 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին,

Զեկ. Ա. Գաբրիելյան

16)Եղեգիս համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը հաստատելու մասին,

Զեկ. Ա. Դանիելյան

17)Եղեգիս համայնքի Աղնջաձոր գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 3,73265 հա մակերեսով այլ հողատեսքը «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ին անհատույց, քսանհինգ տարի ժամկետով բնապահպանական նպատակներով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու մասին,

Զեկ. Ա. Գաբրիելյան

18) Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,1605 հա և 0.063հա մակերեսներով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերն աճուրդային կարգով օտարելու մասին,

Զեկ. Ա. Գաբրիելյան

19)Աղնջաձոր գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,04094 հա մակերեսով բնակավայրերի նշանակության այլ հողեր հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին:

Զեկ. Ա. Գաբրիելյան

20)Աղնջաձոր գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,0083 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին,

Զեկ. Ա. Գաբրիելյան

21)Քարագլուխ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,6028հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին:

Զեկ. Ա. Գաբրիելյան

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
Հաստատվել է օրակարգից հանել 15-րդ կետը և ավելացվել հետևյալ բովանդակությամբ, որպես օրակարգային հարց:
Ա. Գաբրիելյանը առաջարկել էր 5-րդ կետ օրակարգում՝ երկու կեռնագծերի կողմից վերանայել խոնարհության տարածքը:
Հաստատվել է հանել. օրակարգից նաև 18-րդ հարցը

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 12 Ա/

ԼՍԵՑԻՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄՈՒՐԱԴ ՕՀԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 83-րդ հոդվածի 2-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Ընդունել ի գիտություն Եղեգիս համայնքի ղեկավարի հաղորդումները 2025թ. չորրորդ եռամսյակի բյուջեի կատարման ընթացքի մասին՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ- 7 Դեմ- 0 Ձեռնպահ- 2

Ա. Հարությունյան
Ֆ. Մաթևոսյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 13 Ա/

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄՈՒՐԱԴ ՕՀԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 82.1.-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու Ֆինանսատնտեսական և զբոսաշրջության հարցերի մշտական հանձնաժողովի կողմից տրամադրված «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2025 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությանը և 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությանը դրական եզրակացություն տալու մասին» որոշումը

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի 2025 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն սույն որոշման կից հավելված 1-ի:

2.Հաստատել Եղեգիս համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն սույն որոշման կից հավելված 2-ի:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 1

Ավ. Ավագյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 14 Ա/

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման 3-րդ գլխի դրույթները, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի 100122CDXR9V ծածկագիրը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Շատին գյուղի վերևի թաղամասում գտնվող փողոցը անվանակոչել՝ «Եղեգիս համայնք, Շատին գյուղ, 16-րդ փողոց 4-րդ փակուղի» անվամբ:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 15 Ա/

ԼՍԵՑԻՆ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ 26/01/2026Թ. ԹԻՎ 13Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Եղեգիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալի 26-ը հունվարի 2026թ. «Հանգուցյալ Կարապետ Սիսակի Կարապետյանի հուղարկավորության ծախսերի հատուցման մասին» թիվ 13Ա կարգադրությունն ընդունել ի գիտություն:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 16 Ա/

ԼՍԵՑԻՆ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Եղեգիս համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի երկրորդ նիստի գումարման օր սահմանել 2026 թվականի մարտի 27 -ին, ժամը 15:00-ին:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 17 Ա/

ԼՍԵՑԻՆ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԵՐԵՔ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության

Կառավարության 28-ը հոկտեմբերի 2010 թվականի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N1477-Ն որոշման պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը երեք տարի ժամկետով վարձակալության օգտագործման տրամադրելուն՝

1.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի «Սատանի քար» կոչվող հանդամասում գտնվող 0,2 հա և 0,2 հա մակերեսներով արոտավայր հողատեսքերը վարձակալության օգտագործման տրամադրել Հերմոն գյուղի բնակիչ Սամվել Արմենակի Դանիելյանին: 9 կողմ 0 դեմ 0 ձեռնպահ

2.Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի «Գետիկվանք» կոչվող հանդամասում գտնվող 10հա մակերեսով արոտավայր հողատեսքը վարձակալության օգտագործման տրամադրել Վարդահովիտ գյուղի բնակիչ Գագիկ Արսենի Կարապետյանին: 0 կողմ 9 դեմ 0 ձեռնպահ
առաջարկվեցին հարցեր

3.Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի «Գետիկվանք» կոչվող հանդամասում գտնվող 10հա մակերեսով արոտավայր և 10հա մակերեսով խոտհարք հողատեսքերը վարձակալության օգտագործման տրամադրել Վարդահովիտ գյուղի բնակիչ Նահապետ Բայանդուրի Խանոյանին: 9 կողմ 0 դեմ 0 ձեռնպահ

4.Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի «Գետիկվանք» կոչվող հանդամասում գտնվող 3հա մակերեսով խոտհարքը վարձակալության օգտագործման տրամադրել Շատին գյուղի բնակիչ Վրեժ Պարգևի Խանոյանին: 9 կողմ 0 դեմ 0 ձեռնպահ

5.Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի «Գետիկվանք» կոչվող հանդամասում գտնվող 50հա մակերեսով արոտավայր հողատեսքը վարձակալության օգտագործման տրամադրել Վարդահովիտ գյուղի բնակիչ Գագիկ Շիրակի Արամյանին: 9 կողմ 0 դեմ 0 ձեռնպահ

6.Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի «Գետիկվանք» կոչվող հանդամասում գտնվող 50 հա մակերեսով արոտավայր հողատեսքը վարձակալության օգտագործման տրամադրել Վարդահովիտ գյուղի բնակիչ Էմին Վիգենի Վարդանյանին: 9 կողմ 0 դեմ 0 ձեռնպահ

7.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ կնքել արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու պայմանագիր, վճարի չափը սահմանելով տվյալ արոտավայրի կամ խոտհարքի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:
Առաջարկվեց հարցեր հարցերի չկան:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 18 Ա/

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով համայնքի կողմից զարգացման ծրագրերին մասնակցելու վերաբերյալ ստորև ներկայացվող հայտերը՝

1)Թառաթումբ, Քարագլուխ, Սալլի, Հերմոն, Աղնջաձոր, Հորս, Եղեգիս, Արտաբույնք, Հորբատեղ և Վարդահովիտ գյուղերում ոռոգման առուների կառուցում,

2)Աղնջաձոր, Արտաբույնք գյուղերում ՕԿՋ-ի կառուցում, Գողթանիկ գյուղում խմելու ջրի ցանցի կառուցում,

3)Շատին գյուղի դեպի հիվանդանոց տանող գյուղամիջյան ճանապարհի ասֆալտապատում,

4)Շատին գյուղում մանկապարտեզի կառուցում:

Հիշատակագրի հերթին գյուղի հան ավագանու անդամ Հրաչյա Վարդանյանը:

Կողմ- 10 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 19 Ա/

ԼՍԵՑԻՆ

ՀՈՐՍ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը ապրիլի 2021 թվականի թիվ 698-Ն որոշման 31-րդ կետի 7-րդ ենթակետը, 39-րդ կետի 1-ին ենթակետը, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 24/06/2025թ. N՝ Կ-24062025-10-0091 որոշումը՝ գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող սխալմամբ «քաղաքացիների սեփականություն» փոխանցված բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 10-031-0021-0017, մակերեսը՝ 0,04425 հա) ճանաչել որպես համայնքային սեփականություն:

2.Համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ- 10 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 20 Ա/

ԼՍԵՑԻՆ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 29/11/2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ122Ա ՈՐՈՇՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Եղեգիս համայնքի ավագանու 29-ը նոյեմբերի 2024 թվականի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կառավարման պետական գույքի կառավարման կոմիտեին («Արտաբույնք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին) անշարժ գույքերը նվիրատվությամբ անհատույց հանձնելու մասին» թիվ 122Ա որոշման բովանդակությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«1.Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Արտաբույնք գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ստորև ներկայացված անշարժ գույքերը նվիրատվությամբ անհատույց հանձնել Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին («Արտաբույնք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին)՝

1)բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողատեսք, կադաստրային ծածկագիր 10-010-0422-0003, մակերեսը 0,085հա,

2)բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողատեսք, կադաստրային ծածկագիր 10-010-0051-0039, մակերեսը 0,04003հա:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:»:

Կողմ- 10 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 21 Ա/

ԼՍԵՑԻՆ

ԱՀԱՐՈՆ ՅՈՒՐԻԿԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ԵՎ ՆԱԻՐՈՒՀԻ ՍԱՄՎԵԼԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի պահանջներով,

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Աղնջաձոր գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Աղնջաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացիներ Ահարոն Յուրիկի Գաբրիելյանի և Նաիրուհի Սամվելի Ղազարյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը (0,121հա մակերեսով, 10-007-0127-0304 կադաստրային ծածկագրով) փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր, գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

2.Հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

Ահ. Գաբրիելյան Ա. Մանուկյան Հ. Գրիգորյան

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22 Ա/

ԼՍԵՑԻՆ

ԱՎԱԳԱՆՈՒ 21/12/2025Թ. «2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 121Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Եղեգիս համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 21-ի «2026 թվականի համար Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային

դրույքաչափերը մասին» թիվ 121Ա որոշման կից հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

2.Սույն որոշման գործողությունը տարածվում է 2026 թվականի փետրվարի 1-ից ծագող իրավահարաբերությունների վրա:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 23 Ա/

ԼՍԵՑԻՆ

ՍԱԼԼԻ ԳՅՈՒՂԻ «ՇՈՐ ՋՈՒՐ» ԿՈՉՎՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՉՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ 150 ՄԵՏՐ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ ԵՐԿԱԹՅԱ ԽՈՂՈՎԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Տալ համաձայնություն ապամոնտաժելու Սալլի գյուղի «Շոր ջուր» կոչվող տարածքում գտնվող 150 (մեկ հարյուր հիսուն) մետր երկարությամբ չշահագործվող D=440մմ երկաթյա խողովակը և դարձնել կիսախողովակ՝ Սալլի գյուղի մայր առվի վրա տեղադրելու նպատակով:

Կողմ- 10 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24 Ա/

ԼՍԵՑԻՆ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ կետերի և 3-րդ մասի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Եղեգիս համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 24-ի «Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ին անհատույց (մշտական) բնապահպանական նպատակներով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու մասին» թիվ 65Ա որոշման մեջ՝

ա)«(մշտական)» բառը փոխարինել «քսանհինգ տարի ժամկետով» բառերով:

բ) 2-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ նոր բովանդակությամբ՝

«1)Վերոնշյալ հողատեսքերը օգտագործման իրավունքով տրամադրել՝ համայնքի բնակիչներին վերը նշված հողատարածքներում անասունների արածեցումը և խոտհունձը չխոչընդոտելու պայմանով, ինչպես նաև ապահովել կենսաբազմազանության պահպանությունը, որսագողության կանխարգելումը և իրականացնել ծառատունկ:»:

2.Եղեգիս համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 24-ի «Եղեգիս համայնքի Քարագլուխ գյուղի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ին անհատույց (մշտական) բնապահպանական նպատակներով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու մասին» թիվ 67Ա որոշման մեջ՝

ա)«(մշտական)» բառը փոխարինել «քսանհինգ տարի ժամկետով» բառերով:

բ)2-րդ կետը շարադրել հետևյալ նոր բովանդակությամբ՝

«2.Վերոնշյալ հողատեսքերը օգտագործման իրավունքով տրամադրել՝ համայնքի բնակիչներին վերը նշված հողատարածքներում անասունների արածեցումը և խոտհունձը չխոչընդոտելու պայմանով, ինչպես նաև ապահովել կենսաբազմազանության պահպանությունը, որսագողության կանխարգելումը և իրականացնել ծառատունկ:»:

գ)Կատարել լրացում 3-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝

«3.Պայմանագիրը կնքելուց հետո՝ երկու տարվա ընթացքում իրականացնել 15-20 միլիոն ՀՀ դրամի ներդրում:»:

Կողմ- 10 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25 Ա/

ԼՍԵՑԻՆ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՄՈՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,46379 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՌՈՏԱՎԱՅՐ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքերը 25(քսանհինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին՝

1)կադաստրային ծածկագիր 10-029-0109-0055 , մակերեսը 0,46379հա:

2.Մեկնարկային գին սահմանել 20 000 (քսան հազար) ՀՀ դրամի չափով:

3.Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- Դեմ- Ձեռնպահ-

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26 Ա/

ԼՍԵՑԻՆ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄՈՒՐԱԴ ՕՀԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալի 17/02/2026թ. թիվ 35Ա որոշումը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Եղեգիս համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը, և ստորև ներկայացված գույքերը գույքագրել Եղեգիսի համայնքապետարանի գույքային հաշվեկշռում՝

1.LX-41 արհեստական եղևնի 400սմ- 1 հատ -400.000ՀՀդրամ, գ. Շատին

2.X-84/270 արհեստականեղևնի 270սմ-2 հատ-200.000 ՀՀդրամ, գ Արտաբույնք, գ. Թառաթումբ

3.X-83 արհեստականեղևնի 210սմ-1 հատ-49.000ՀՀ դրամ, գ. Սալլի

4.Դյուրակիրհամակարգիչ HP 15-FC0171NIA Athlon Silver 7120 U/8 GB/256GB SSD/AMD Radeon Graphics/ 15.6' FHD-1 հատ -149.000 ՀՀդրամ,

5.Հիշողությանքարտեր Sandisk E xtreme Pro Microsd 128 GB- 1 հատ-23.900 ՀՀ դրամ,

6.Ֆոտոխցիկ Canon Eos – 1 հատ- 679.000 ՀՀդրամ
7.Էլեկտրական կոմպրեսոր – 1 հատ- 85.000 ՀՀդրամ
8.Տեսախցիկ– 11 հատ- 165.000 (Վարդահովիտ, Հերմոն, Գողթանիկ, Եղեգիս, Արտաբույնք, Հորբատեղ, Հորս, Սալլի, Թառաթումբ, Աղնջաձոր, Քարագլուխ գյուղեր)
9.Պերֆերատոր -1 հատ-90.000 ՀՀդրամ
10.Անկյունահղկիչ- 90.000 ՀՀդրամ
11.Պալատկա կողքերը փակված 3*3- 15 հատ- 600.000 ՀՀ դրամ
12.Ջրի դիսպենսեր MIDEA 1675-81.000 ՀՀ դրամ:

Կողմ- 10 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27 Ա/

ԼՍԵՑԻՆ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂՆՋԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 3,73265 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ <<ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ>>-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ, 25 ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասերով, 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Աղնջաձոր գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքը անհատույց, 25 (քսանհինգ) տարի ժամկետով բնապահպանական նպատակներով օգտագործման տրամադրելու «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ին՝
1)կադաստրային ծածկագիր 10-007-0102-0020, մակերեսը 3.73265հա, այլ հողատեսք,
2. «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ին՝ չխոչընդոտել վերը նշված հողատարածքներում բնակիչների կողմից անասունների արածեցումը և խոտհունձը:

3.Պայմանագիրը կնքելուց հետո՝ երկու տարվա ընթացքում իրականացնել 18-20 միլիոն ՀՀ դրամի ներդրում:

Կողմ- 10 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28 Ա/

ԼՍԵՑԻՆ

հանձնել ՀՀ օրենքի պահպանմամբ

ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,1605ՀԱ ԵՎ 0,063ՀԱ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերն աճուրդով օտարելու մասին (մեկ լոտ).

1)կադաստրային ծածկագիր 10-035-1003-0002, մակերեսը՝ 0,1605 հա, մեկնարկային գին սահմանել 430 000 (չորս հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ):

2)կադաստրային ծածկագիր 10-035-0255-0019, մակերեսը՝ 0,063 հա, մեկնարկային գին սահմանել 170 000 (մեկ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ):

2. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- Դեմ- Ձեռնպահ-

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29 Ա/

ԼՍԵՑԻՆ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂՆՋԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,04094 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԵՐ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային

օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Աղնջաձոր գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության այլ հողեր հողատեսքն աճուրդով օտարելու մասին.

Կադաստրային ծածկագիր 10-007-0006-0006, մակերեսը 0,04094հա:

2.Մեկնարկային գին սահմանել 460 000 (չորս հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամի չափով:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 10 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30 Ա/

ԼՍԵՑԻՆ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂՆՋԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,0083 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Աղնջաձոր գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողատեսքն աճուրդով օտարելու մասին.

Կադաստրային ծածկագիր 10-007-0023-0014, մակերեսը 0,0083հա:

2.Մեկնարկային գին սահմանել 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 10 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31 Ա/

ԼՍԵՑԻՆ

ՔԱՐԱԳԼՈՒԽ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,6028 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Քարագլուխ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն աճուրդով օտարելու մասին.

կադաստրային ծածկագիր 10-044-0227-0055, մակերեսը՝ 0,6028 հա, մեկ լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել 1 300 000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ):

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 10 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32 Ա/

Ա. Զաքարյանին առաջարկել դիմել վայրի լեռնադիմեցի կոչմամբ հասցեագրած գրությամբ հրավիրել հանդիպում

3 000 000 (երեք միլիոն) դրամի գումարով հայտարարություն

Որոշումն ստացողներ՝ կողմ 10 դեմ 0 ձեռնպահ 0

(կցվում է որոշման 29Ա).

Առաջարկվեց 3 000 000 դրամի գումարի եռամսյակ հանձնաժողով հրավիրել յուրաքանչյուր հայտի համար և աշխատավարձերը սահմանել 15 (տասնհինգ) %-ի չափով:

Որոշումն ստացողներ՝ կողմ 8 դեմ 1 ձեռնպահ 1

(կցվում է որոշման 26Ա) Ա. Ավետիսյան Հ. Մելքոնյան

Ավագանու անդամներ՝

Ստեփանյան Արթուր բացակա

Մարտիրոսյան Նարեկ

Մարտիրոսյան Զոյա

Հակոբյան Արտուշ

Պողոսյան Հրաչյա

Սարգսյան Տիգրան

Նազարյան Արգիշտի

Ղահրամանյան Վարդան

Գաբրիելյան Ահարոն

Սմբատյան Մամիկոն բացակա

Հարությունյան Կարեն բացակա

Սմբատյան Արսեն բացակա

Ստեփանյան Սաշա

Միքայելյան Քրիստինա

Բաբայան Վահե բացակա

Հանձնաժողովի քարտուղարի
1-ին տեղակալ _____

Նիստն արձանագրեց՝ Աննա Դանիելյանը _____